

հարցազրույց ինքս ինձ հետ

- մեկ-երկու բառով նշեք
ձեր բանաստեղծության
առանձնահատկությունները

- զուսպ են
չեն ճչում
խունջիկ-մունջիկ չեն գալիս
ընթերցողի հիշողության մեջ
տարածվում
նստում են ծաղկափռչու պես

*

- բանաստեղծության
ձեր չափանիշը

- որ այն լինի
նաև բանաստեղծություն
անցած-գնացած դարերերի համար

*

- ձեր ներշնչանքը
ի՞նչ ակունքներից է բխում

- հույզի ակնթարթային վետվետումներից
պայծառացած մտքի շողարձակումներից
մաքուր ապրումի շնկշնկոցներից
ամբողջի հետ մեկ լինելու ներսուզումներից
զնգնգացող անմարմին խոսքի կանխավայելումներից
չնչին սովորական երևույթների դիտարկումներից

*

- ձեզ այնքան էլ չեն սիրում
հեզնում քմծիծաղում են
լուրջ չեն ընդունում
ունեք կռահումներ
ինչի՞ համար

- միզուցե պատճառը
խաբուսիկ ինքնահեզնանքս է
միզուցե
ընդգծված զանցառությունս է
լուրջ և անլուրջ թեմաների
միզուցե
վերջին շրջանի

ձաղկող գործերս են
միգուցե
անպաճույճ տողերս են
մի գուցե
անհավակնոտ գիրս է
միգուցե
այլոց համար արտասովոր
ոչ բանաստեղծական ապրումներս են
լիքը պատճառներ կան
եսիմ

*

- մեր մեջ ասած
մեր ընկերներից մեկը
վերջերս շատ նրբորեն
մեզ ակնարկեց
մեր վերջին գրքի վերնագրի
Ունայնիկների
գրագողության մեջ
ի՞նչ կասեք

- իհարկե ներքուստ վրդովվեցի
ինքս մեր մեջ եռ եկա
19-րդ դարի անգլիացի
նկարիչ Բանաստեղծ Էդվարդ Լիրը
անունը մեր ընկերը ասաց
լիմերիկներ է գրել
անհեթեթ իմաստագուրկ
հինգտողանի Բանաստեղծություններ
գրքի վերնագիրն էլ
հենց Անհեթեթություններ է
և ի՞նչ ես կարծում
վերնագրերի պատահական համընկնումը
գրագողությունն է
երբ ինքներս
կիլոմետրերով վերնագրեր
կարող ենք արտահանել

*

- լավ
իսկ Գևորգիկների մասին
ի՞նչ կասեք
միայն չարդարանաք
թե անտեղյակ էիք
Վերգիլոսի Գեորգիկներից
Դեմոսֆենի և Յիցերոնի Ֆիլիպիկներից
Իգոր Գուբերմանի Գարիկներից

- իհարկե
էդ ամենի մասին ես գիտեի
առաջին հերթին
ինձ հրապուրեց անվան հետ կապված
խաղարկումների լայն հնարավորությունները
մեր պոեզիայում
նման բան երբեք չէր եղել
ես ինքնամոռաց ներքաշվել էի ստեղծագործական խաղի մեջ
ինչպես հիմա
թեպետ ումանք
հնարավոր է կարծեն
թե տառապում եմ
անձի երկատվածությունից
կամ մեծամիտ եմ

*

- իսկ ի՞նչ
արձագանքներ եղան
Ունայնիկների վերաբերյալ
որքան գիտեմ
այն համարում եք
մեր պոեզիայի համար
նշանակալից գիրք
սակայն եթե անկեղծորեն
դրանք նույն գևորիկներն էին
ոչ ավելին

- բացի Անի Հոֆստանից
կարծես թե ոչ ոք
մի տեսակ
գիրքը չսիրվեց
կամ չհասկացվեց
թեպետ այնտեղ կան բանաստեղծություններ
որ միայն ես կարող էի գրել

*

- ի դեպ
վերջին շրջանի ձեր բանաստեղծությունները
հենց բանաստեղծության մասին են
ինչո՞ւ

- մեկ-մեկ
այլ բաների մասին էլ եմ գրում
ուշադիր չե՞ք
այսպես ասեմ
իմ բանաստեղծությունների համար
տեսական հիմնավորումներ են պետք
թեպետ Արքմենիկ Նիկողոսյանը

և Արմեն Ավանեսյանը
որոշ դիտարկումներ արել են

*

- ըստ Արքմենիկի
Զահրատի և ձեր գործերի միջև
որոշակի հարազատության կա
և միայն Զահրատն է

- հին արևելքի պոեզիայից
մինչև Սասնա ծռեր
համաշխարհային հեքիաթներից
մինչև բոլոր ազգերի դիցաբանություն
հայրեններից մինչև Թաքուրոքո
Բասյո-Իսսայից մինչև Չիլո
Վիյոնից մինչև Շեկո
Ժողովողից մինչև Հակոբ Մովսես
թերևս նաև
Հովհաննես Գրիգորյանից
թերևս նաև
Զահրատից

*

- մեկ բանաստեղծություն ունեք
որ կարծես թե
ձեր պոեզիայի հոչակագիրն է
կասե՞ք

- Թիրախ չկա
ես ձգում
և բաց եմ թողնում լարը
առանց նետի

*

- վայրկյան առ վայրկյան ավելացող
պոեզիայի երկիրն ու երկինքը ապականող
վատ բանաստեղծությունների ճիրացող լորձի դեմ
ի՞նչ կանխարգելիչ միջոցառումներ
կազդուրիչ վարժություններ կառաջարկեք

- բացարձակապես ոչ մի
բանաստեղծության ինքնամաքրման պրոցեսները
նյութափոխանակության համակարգերը
միշտ էլ անխափան աշխատել են

*

- տարիներ առաջ
մեր համատեղ ընթերցողների
և բանաստեղծների համար
կազմել էիք մի անլուրջ
ու սադրող հարցաշար
հանուն գվարթության
թույլ կտա ք
սահուն կերպով
այն խցկել այս շարքի մեջ

- ինչպես կուզեք
փաստենք միայն
որ միալար էս գրիցը
էդ հարցերի հետևանքն է

*

հարց 1
բանաստեղծը շաբաթվա մեջ
քանի՞ օր պիտի խմի ոգելիցներ
և խմելուց ի՞նչ ու ինչքա՞ն պետք է խմի

հարց 2
ի՞նչ թեմաներ երևույթներ
ապրուժներ հույզեր
չի կարող հաղթահարել
պատկերել պոեզիան

հարց 3
հնարավո՞ր է
գոռով դառնալ բանաստեղծ

հարց 4
պարտադի՞ր է
որ բանաստեղծը աղքատ լինի

հարց 5
արվեստի ճյուղերից
ո՞ր մեկն է ավելի անպաշտպան խոցելի
դիլետանտական հարձակուժեներից

հարց 6
արդյոք ճի՞շտ է
որ տաղանդավոր բանաստեղծուհին
կամ չի ամուսնանում
կամ եթե ամուսնանում է
հետագայում ամուսնալուծվում է

հարց 7
արդյոք ճի՞շտ է
որ տաղանդավոր բանաստեղծը
առողջական որոշակի խնդիրներ ունեցող
կամ ձախորդ մեկն է

հարց 8
բանաստեղծը կարո՞ղ է լինել
գեր ցմփոր ճարպակալած

բոխախավոր հաստավիզ
էթէ այո
բերեք գոնէ մեկ օրինակ
հարց 9

բանաստեղծը քանի՞ տարեկանից հետո
կարող է հանգիստ թողնել
բանաստեղծություն գրելը
հարց 10

ո՞վ է մեր ժամանակների
«ամենաբեղմնավոր» բանաստեղծը
շատագիրը էլի
էթէ համարձակություն ունեք
պատասխանեք

հարց 11
էթէ համարձակություն ունեք
չեք երկնչում հետագա քաջքուկներից
գրեք 3 բանաստեղծի անուն
որոնց գործերը
տակնուվրա են անում ձեր նյարդային համակարգը
կամ նրանց բնավ էլ բանաստեղծ չեք համարում
հարց 12

բանաստեղծական որոշ ձևեր
ժանրեր անհետանում են մեր պոեզիայից
կամ արդեն անհետացել են
ինչո՞ւ
հարց 13

էթէ չի գրվում
ի՞նչ անի բանաստեղծը
հարց 14
ձեզնից բացի
էլ ո՞ւմ եք համարում
տաղանդավոր բանաստեղծ

*

- քայլել շատ եք սիրում
և նկատելի է
որ ձեր ստեղծագործական շնչառությունը
բացվում է հենց քայլելիս
նույնիսկ ուզում էիք
քայլողի օրագիրը
կամ քայլողի ավետարանը
վերնագրով շարք գրել
կգրե՞ք երբևէ

- իմ մտքի մեջ
ինձ համար
ես այն մի քանի անգամ գրել
ու արդեն մոռացել եմ

*

- շարունակ
պրպտութեան մեջ եք
հիմա ձեր հին գրածներից
ո՞րն եք հիշում

- ախ մայիս մայիս
երակս բացեմ
վարդեր կծորան
բայց ո՞ւմ զարադարեմ

*

- ի միջի այլոց
սիրային բանաստեղծություններ
համարյա չեք գրում
ինչ է
արգելված թեմա է ձեզ համար
թե՞ այլևս չեք սիրում
թե՞ ձեր սիրտը կարծրացել է
թե՞ լայեղ չեք անում

- ախ
երևի թե բոլորը միասին
բայց ժամանակին
ամուսնությունից առաջ
մի քանի հոգոց գրել եմ
հետո միանգամից
սիրային բանաստեղծությունների հանդեպ
սերս մարեց
իսկ նկատել էք
հիմա էլ ես ձեզ հարցնեմ
բացառությամբ մի քանի հոգու
բոլորը միայն
հենց էդ գործին են լծված

*

- ձեր միտքը
ճշգրիտ չեք ձևակերպում
ոչ թե համարյա բոլորը
սիրային բանաստեղծություն գրելու գործին են լծված
այլ շատ-շատերը
որ չեն ալարում
կցմցել երկու բառ իրար
բանաստեղծություն երկնելու
ցավին են տրված
իսկ սիրային բանաստեղծություն գրելը
ամենևին էլ պախարակելի չէ
մանավանդ առաջին մի քանի տարին
սկսնակների համար անհրաժեշտություն է

պոեզիան առաջին հերթին
այդ տվայտողներից է
հավաքագրում իր մահապարտներին
և չմոռանանք նաև
էդ գործի խառն վարպետներին
որոնց գործերում Մերը բխում է աստվածայինից

- որքան հասկացա
կամաց-կամաց փոխվում ենք տեղերով
դժվա՞ր չէ արդյոք լինել
աշխարհի ամենամենակ բանաստեղծը
պարզ է նկատի չունեմ ընտանիքը
ընկերներին և այլն
ընդհանրապես առանձացված
մեկուսացված լինելը
գրական միջավայրից
երբեք չունենալ ոչ գրական ուղեկիցներ
ոչ գրական սերունդ
ոչ գրական թիմ
պարզ է նկատի չունեմ
էս թագավարակի օրերը
երբ մեզ մոտ
բոլորն են հայավարի մեկուսացված

*

- էս ինչ
սրտաճմլիկ լալկան հարց եք տալիս
վայ-վայ վույ-վույ
կամ մի գրեք
կամ մի տրտնջացեք
աշխարհը ոտ առե կերթա
դուք ձեր չնչին
ախուժախերն ենք ճովողում
և ի՞նչ էին տալու ձեզ
գրական միջավայրը ուղեկիցները
սերունդը թիմը
որ չունեք հիմա
փա՞ռք ճանաչո՞ւմ
փո՞ղ մրցանակնե՞ր
հարալեզ սիրուհիների դա՞ս
վաճառվող գրքերի մեծ թվաքանա՞կ
ինչ է
էդ ամենից Հոմերոսն ունե՞ր
թե Նարեկացին
Դուրյանն ունե՞ր
թե Մեծարենցը
իսկ ի՞նչ ասի
հեռավոր ֆրանսիաներում
անհուսորեն լռված

իր մարմինը օտար բժիշկներին վստահած
Լռության պարտեզներում պայծառացած
Անատոլի Հովհաննիսյանը

- Անատոլիի հետ ծանոթացել
մտերմացել եմ հեռավար
համարյա կովելով
երբ ես գրառում էի կատարել
իմ պաշտելի բանաստեղծի վերաբերյալ
և իհարկե Անատոլին համաձայն չէր
և իհարկե շատ բաներում
մենք իրար հետ համաձայն չենք
ընդունում եմ
չնչին և սին են
իմ մտորումները

*

- մի տեսակ
ամեն ինչ իրար խառնվեց
երկուսով հարց ենք տալիս
երեքով միանգամից պատասխանում
Գրանիշի խմբագիր Հասմիկ Հակոբյանը
ի դեպ կատակով ակնարկեց
որ համաշխարհային
էս ինքնամեկուսացումը
ձեզ վրա վատ է ազդել
գուցե հանուն ձեր թանկ առողջության
ընդհատե՞նք
շարունակ ինքնագրգովող
էս ջութեծոցին

- վաղ է դեռ
մանավանդ օր օրի շատանում ենք
և կարծես թե
մեզ հոգնել չկա
վկա
Ժամանակին գրված
էս մի գործը

էս հոգնեցի բանաստեղծությունից
բանաստեղծությունն էլ ինձնից
միակ հույսս մնաց
բանաստեղծությունը

*

- հերվա
ձեր իսկական հարցազրույցներից մեկում
էսպիսի միտք եք բարբառել

մեր բանաստեղծության մեջ
լիքը դատարկ
անտեսանելի խորշեր կան
էդ ի՞նչ խորշեր են
էդ ի՞նչ անհայտ տարածքներ են
որ մեր պոեզիան դեռ չի լցունել
դեռ չի հայտնագործել
թե՞ պարզապես
ինքնատիպ երևալու նպատակով
հերթական անգամ
դուրս եք տվել

- մենք մեզ
մեր պոեզիան
հաստ մի թաղանթով
փաթաթել պարփակել ենք
ու մեր Ձայնի
գեղգեղոցի հրճվանքից նվաղած
պատեպատ մեր զարկվելը չենք զգում
բառերի հետ հմտորեն խաղում
ընտիր աճպարարություններ ենք անում
սակայն քարթու
ձանձրալի ասելիքով ենք
մեր ապրումները խաղարկում
մի քանի ծեծված թեմաներ
գերազանցիկի պես անգիր ենք արել
ու վեր-վեր ենք թռչում
երբ անթեմա բանաստեղծությունն է
մեզ ողջունում
վախենում ենք վրիպելուց
լեղապատառ լինում անլուրջից
տակներս անում ոչ պոետիկ բառերից
սրտդողում ընթերցողի պակասից
մեզ համար պոեզիան
շատ հաճախ սպասելին
հայտնին
ու ավաղ ենթադրելին է
մեր պոեզիան
իր չիմացած բաներից չի խոսում
հաճախ շատախոս է
ու իր ճառագայթման բնույթին չի հավատում
մեր պոեզիան խորշում է գիտությունից
իր սիրասուն զավակից
այ
էդ խորշերը
անհայտ տարածքները
իր զավակի արեգակնային համակարգում են շարունակ ծփում
ու կարկաչում ու կանչում

*

- ախր
էլի շտապեցիր
բազմօրինակդ իմ կիսատաբան
սա հո
կատարյալ բանաստեղծություն չէ՞
որ վռագում
կարճ էս կապում
ծավալվիր ինչքան կուգես
ինչքան կուգես բազմապատկվիր
գուցե թե
սա քո վերջին լուռներն են
չլինի թե վաղը
կամ հենց էս պահին
տիեզերքի հեռուներից պոկված
սրտից թույլ մի սև խոռոչ
չքնաղ մեր սիրտը հոշոտի
չլինի թե վաղը
կամ հենց էս պահին
այլմոլորակային բո՞լի մի ցեղ
հողագունդը ծնկի բերի
չլինի թե վաղը
կամ հենց էս պահին
գմփան ահեղ հրաբուխներ
չլինի թե վաղը
կամ հենց էս պահին
անվերադարձ գահավիժեն թռչունները
դելֆիններն իրենց շարտեն ափ
չլինի թե վաղը
կամ հենց էս պահին
ջրերն իրար շալակ եկած
խորտակեն մեզ
բա որ
աստղակերպերի կարկուտ տեղա՞
բա որ
տիեզերքից
ճառագայթման հոսքը կտրուկ վարարի՞
բա որ
անգութ մի համաճարակով խժովե՞նք
բա որ
հենց այնպես
վերցնես ու ոտքերդ տնկե՞ս

- թվարկումներովդ բժժցրիր
տապալեցիր բոլորիս
հասկացանք
ինտելեկտուալ բանաստեղծության ջատագովա էս
բայց միթե վա՞տ է ասված
ունենալ երգ այնքան նայիվ

որ հմայե երեխային
ու ծերունու սրտում մնա